| | |
|---|---|
| Դասընթացի անվանումը(կրթամոդուլի դասիչը) | **ՃՅՈՒՂԻ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ (6ԷԻԿ003)** |
| ECTS կրեդիտ | 1 |
| Դասընթացի պատասխանատու դասախոս | Արմենակյան Ա. Ռ., տնտ.թ., ասիստենտ |
| Ուսումնառության վերջնարդյունքները | Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի<br><br>*(գիտելիք և իմացություն)*<br>• ներկայացնել մասնագիտական գիտելիքներին վերաբերող իրավական նորմերով սահմանված իրավահարաբերությունները,<br>• գտնել «ԻՐՏԵԿ» և «arlis.am» էլեկտրոնային իրավական տեղեկատվական որոնողական համակարգերից մասնագիտական ոլորտին վերաբերող իրավական ակտերը,<br>• մեկնաբանել քաղաքաշինության ոլորտին վերաբերող օրենքներն ու այլ իրավական ակտերը:<br><br>*(կարողություններ)*<br>• արագ գտնել քաղաքաշինական ոլորտում ՀՀ օրենսդրական ակտերը, իմանալ վերջիններիս ընդունման, վավերացման (ստորագրման, գրանցման), ուժի մեջ մտնելու և ուժը կորցրած ճանաչելու ամսաթվերը,<br>• տիրապետել քաղաքաշինական ոլորտում գործող իրավական ակտերով սահմանված իրավունքներին, դրանցից օգտվելու հնարավորություններին,<br>• տեղեկանալ իրավական ակտերի իմպերատիվ (հրամայական) պահանջների չկատարման դեպքում սահմանված պատասխանատվության ենթարկման մեխանիզմներին,<br>• գտնել քաղաքաշինական ոլորտում գործող իրավական ակտի ժամանակային տարբերակները, կատարված փոփոխությունները, լրացումները և հղումները,<br>• ծանոթանալ ՀՀ օրենսդրական դաշտում կատարված փոփոխություններին, լրացումներին, ընդունված ակտերին ցանկացած ժամանակ: |

| | |
|---|---|
| Դասընթացի թեմատիկ ծրագիրը | • ՀՀ քաղաքացիական օրենսգրքի քաղաքաշինությանը, պայմանագրային իրավահարաբերություններին և կողմերի պարտավորություններին վերաբերող նորմերը:<br>• Քաղաքաշինության մասին ՀՀ օրենքով սահմանված նորմերը:<br>• ՀՀ կառավարության 19.03.2015թ.-ի 596 որոշմամբ սահմանված քաղաքաշինական գործունեության վերաբերող իրավահարաբերությունները: |
| Դասընթացի գրականության ցանկ | • ՀՀ օրենքը քաղաքաշինության մասին<br>• ՀՀ քաղաքացիական օրենսգիրք<br>• ՀՀ կառավարության 19.03.2015թ. 596 որոշում |

ԷԻԿ ամբիոնի վարիչի ժ/պ Տ. Վ. Եդոյան